ԼՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՁԼՄ-ՆԵՐՈՒՄ ԿԻՐԱՌՎՈՂ ՄԱՆԻՊՈՒԼՅԱՑԻՈՆ ՀՆԱՐՔՆԵՐԸ ՀԱՆՐԱՅԻՆ ԿԱՐԾԻՔԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ (ԱՊՐԻԼՅԱՆ ՌԱԶՄԱԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀՐԱԴԱԴԱՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՕՐԻՆԱԿՈՎ)*

Անուշ Դոլուխանյան

Բանալի բառեր՝ մանիպուլյացիոն հնարք, հանրային կարծիք, հասարակական գիտակցություն, ՁԼՄ, Ապրիլյան ռազմագործողություն, հրադադար:

XX դարավերջը նշանավորվեց տեղեկատվական գործընթացների գլոբալիզացմամբ և տեղեկատվության հոսքի՝ որպես լսարանի վրա ունեցած ազդեցության ընդլայնմամբ. գործոններ, որոնք հիմք են տալիս համոզվելու, որ արդյունաբերական հասարակությանը փոխարինելու էր եկել տեղեկատվական հասարակությունը՝ առաջնահերթություն տալով զանգվածային հաղորդակցությանը:

ՁԼՄ-ները, որ մասնավորապես մշտապես եղել և շարունակում են լինել զինված հակամարտությունների ակտիվ «մասնակիցը», միաժամանակ հասարակական լայն շերտերի գիտակցության վրա ազդելու հնարքների կիրառման լավագույն գործիք են և հարթակ: Ասել, թե հանրությանն ապակողմնորոշելով չես կարող հանրային կարծիք ձևավորել, մեր օրերում ճիշտ չէր լինի: Ասվածի հավաստիքը կարող է լինել հայ-ադրբեջանական հակամարտության սուբյեկտների վարքագիծը մեդիահարթակում:

Այս առումով կարելի է առանձնանել հասարակական կենսագործունեության գրեթե բոլոր ոլորտներում կիրառության լայն թափ ստացած մանիպուլյացիոն գործընթացները, ինչը կառավարելու հնարք է մարդու գիտակցության և հոգեկան աշխարհի վրա նպատակաուղղված ազդեցություն գործելու միջոցով[1]:

«Մանիպուլյացիան իշխանություն իրականացնելու, գործադրելու տեխնոլոգիա է: Ցանկացած քաղաքական մանիպուլյացիայի հիմնական նպատակը իշխանության հասնելն ու այն պահպանելն է»: «Իշխանությունը կարելի է դիտարկել նեղ և լայն իմաստով: Նեղ իմաստով այն ղեկավարման և ենթակայության՝ սուբյեկտ-օբյեկտ հարաբերություններ են, որոնք լինում են կամավոր կամ հարկադրական: Լայն իմաստով մանիպուլյացիան ուղղված է հասարակական կարգի կայունության և համակարգի սոցիալ-մշակութային նույնականության ապահովմանը»,- գրում է քաղաքագետ Է. Քալանթարյանը[2]:

Վերոնշյալ տեսական դրույթները պրոյեկտելով չկարգավորված հակամարտության պայմաններում ապրող հայկական երկու հանրապետությունների և հակամարտության մյուս կողմի՝ հակահայկական քարոզչություն իրականացնող Ադրբեջանի հետ՝ կարող ենք նկատել, որ ցանկացած բնույթի տեղեկատվություն ստանում է քաղաքական նրբերանգներ՝ առաջնահերթ թիրախավորելով հասարակական կարծիքի ձևավորման գործընթացները:

Հետազոտության օբյեկտ ընտրելով հակամարտող կողմերի պաշտոնական հրապարակումները հանրային կարծիք ձևավորող գերակա առցանց (մասնավորապես http://nkrmil.am, http://haqqin.az, http://day.az, http://trend.az, http://vesti.az) լրատվամիջոցներում (2016 թվականի ապրիլի 2-6-ն ընկած ժամանակահատվածում)՝ Ապրիլյան ռազմագործողությունների հրադադարի հաստատման օրինակով նպատակ ունենք

---

* Հոդվածն ընդունվել է 15.03.19:
Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական խորհրդի անդամ բ.գ.դ., պրոֆեսոր Ս. Խանյանը:

ներկայացնելու ՁԼՄ-ներում կիրառվող մանիպուլյացիոն հնարքները՝ իբրև մեկնարկ ընդունելով ԱՀ ՊՆ 02.04.2016 թ. մամուլի հաղորդագրությունը:

Չնայած մինչև 2016 թվականի ապրիլը ԱՀ ՊՆ-ը մամուլի հաղորդագրությունների ձևաչափով հանրությունը պարբերաբար իրազեկում էր Ադրբեջանի ագրեսիվ քաղաքականության, մասնավորապես շփման գծում տիրող իրավիճակի մասին[3], այնուամենայնիվ ապրիլի 1-ի լույս 2-ի գիշերը սանձազերծված գործողությունները անակնկալ էին իրենց ծավալով և և բնույթով, ինչն ընդգծվեց նաև կողմերի լրատվության որակային և քանակային ցուցիչներով:

Ապրիլի 3-ի վաղ առավոտյան հայկական պաշտոնական լրահոսը հայտնեց ժամը 06:00-ից «առաջնային գծի հարավային ուղղությամբ հակառակորդի կողմից հրթիռահրետանային միջոցների և զրահատեխնիկայի կիրառմաբ ագրեսիվ ռազմական գործողությունների շարունակման մասին»[4]՝ դրան հաջորդող մի քանի հաղորդագրություններում վերահաստատելով հակամարտ զորքերի շփման գծի ողջ երկայնքով լարված իրավիճակի պահպանումը: Որոշակիորեն շրջանցելով Ապրիլյան ռազմագործողությունների սկիզբը (փոխադարձ մեղադրանքներ), ընթացքը (իրարամերժ հաղորդումներ կենդանի ուժի և զինտեխնիկայի կորուստների մասին, առանձին տարածքների գրավման գայթակղություն և այլն)՝ դառնանք հրադադարի հաստատման կոչերն ու կողմերի դիրքորոշումներին:

Ոչ պատահական տեղական ժամանակով ժամը 12:53-ին ադրբեջանական ագիտպրոպի ամենացայտուն գործիքներից Haqqin.az-ը, թյուր տեղեկատվության և կեսճշմարտությունների ներկայացման տեխնիկայի կիրառմամբ, հղում անելով Ադրբեջանի ՊՆ-ին, գրեց, թե «հաշվի առնելով միջազգային կառույցների կոչերը և առաջնորդվելով պետության կողմից վարվող մարդասիրական քաղաքականությամբ», ադրբեջանական ռազմական և քաղաքական վերնախավը որոշում է կայացրել դադարեցնել հակահարձակողական գործությունները և անցնել ազատագրված տարածքների ամրապնդմանը. «Հայկական ՁՈՒ-ի սադրիչ գործողությունները չդադարեցնելու և ադրբեջանական խաղաղ բնակավայրերի և մարտական հենակետերի ուղղությամբ կրակը շարունակելու դեպքում, Ադրբեջանի ՁՈՒ-ն կշարունակեն հարձակողական գործողությունները՝ կիրառելով սեփական զինանոցի ողջ հնարավորությունները»[5]:

Ադրբեջանական կողմի այս հայտարարությունը ժամեր անց պաշտոնական հերքում ստացավ ԱՀ ՊՆ մամուլի հաղորդագրության տեսքով, որում ասվեց, թե մարտական գործողությունները միակողմանի դադարեցնելու մասին հայտարարությունն ապատեղեկատվություն է՝ այն մեկնաբանելով «բացահայտ նախապայմաններով լի կրակի դադարեցման իմիտացիա»: Նույն հաղորդագրության մեջ ԱՀ ՊՆ-ն միաժամանակ պատրաստակամություն հայտնեց քննարկելու կրակի դադարեցման մասին պայմանները. «ԼՂՀ Պաշտպանության բանակը պատրաստ է ընդառաջել և քննարկել կրակի դադարեցման մասին առաջարկը՝ նախնական դիրքերի վերականգնման համատեքստում[6]: Հակադրվելով նախորդ հրապարակմանը՝ ժամեր անց ադրբեջանական կողմը արձագանքեց նշյալ հաղորդագրությանը՝ տրամաբանական չհամարելով «նախնական դիրքերի վերականգնման» մասին հայկական կողմի առաջարկ-նախապայմանը: «Ադրբեջանական կողմը չի պատրաստվում լքել դիրքերը, որ Ադրբեջանի ՁՈՒ վերահսկողության տակ է առնվել ապրիլի 2-ին մղված թեժ մարտերի արդյունքում»[7] ,- հայտարարել է Ադրբեջանի ՊՆ մամլո ծառայության ղեկավարը:

Կրակի դադարեցման մասին մամուլը գրեց նաև ապրիլի 5-ի կեսօրին: Քանի որ մեր ուսումնասիրության համար առանցքային նյութ են ծառայել հակամարտության կողմերի պաշտոնական հաղորդումները, ապա այս բաժնում անպայմանորեն պիտի շեշտել այն հանգամանքը, որ կրակի դադարեցման մասին կողմերը պաշտոնապես չգրեցին, դրա փոխարեն պաշտոնական կարծիքը սպասարկող և չսպասարկող լրատվամիջոցները արձանագրեցին ժամը 12:00-ից կրակի երկկողմանի դադարեցման երկկողմանի պայ-

մանավորվածության մասին՝ կապված հակամարտության կարգավորման հարցով նույն օրը Վիեննայում ԵԱՀԿ Մինսկի խումբը բանակցային գործընթաց սկսելու հետ:

Կրակը դադարեցվել է, ընդ որում՝ ասվածը հաստատվել է ԼՂՀ ՊԲ լրատվության և քարոզչության բաժնի պետ Սենոր Հասրաթյանի կողմից: Կողմերը, սակայն, «հասկանալի» պատճառներով հակասեցին իրենց գործելաոճին և պաշտոնական հաղորդագրություն տարածելու փոխարեն միայն հաստատեցին հարցադրումները: Եթե պաշտոնական աղբյուր ընդունելու լինենք Razm.info-ն, ապա այս լրատվամիջոցն իր ֆեյսբուքյան էջում ակնարկեց կրակի դադարեցման մասին. «Բարեկամներ, այս պահին Արցախում հարաբերական անդորր է»[8], որից հետո մամուլը գրեց կրակի դադարեցման շուրջ ձեռքբերված պաշտոնական պայմանավորվածության մասին:

Դիտարկենք պաշտոնական լրահոսը. ԱՀ ՊՆ մամուլի վերջին հաղորդագրությունը 11:45-ին էր, հաղորդվում էր քաղաքացիական բնակավայրերի ուղղությամբ կրակ չվարելու մարտավարությանը հավատարիմ մնալու մասին, հաջորդը՝ 16:55-ին հրապարակվեցին ադրբեջանական հերթական ոչնչացված ԱԹՍ-ի լուսանկարները: Հաջորդ հաղորդագրությունն արդեն ապրիլի 6-ի վաղ առավոտյան էր, որում ՊՆ-ն մեկնաբանեց իրավիճակը հակամարտ զորքերի շփման գծում՝ պաշտոնապես հաստատելով կրակի դադարեցման մասին կողմերի պայմանավորվածությունը[9]: Իսկ պայմանավորվածության մասին հայտարել է ՀՀ ՊՆ Սեյրան Օհանյանը՝ նկատելով, որ այն ձեռք էր բերվել Հայաստանի և Ադրբեջանի ՀՈՒ ԳՇ պետերի Մոսկվայում կայացած հանդիպման արդյունքում:

Նույնպիսի քաղաքականություն էր որդեգրել նաև Ադրբեջանի ՊՆ-ն: Կրակի դադարեցման մասին առաջին տեղեկությունը գտնում ենք Haqqin.az-ի ապրիլի 5-ի ժամը 14:21-ին տարածված «Իլհամ Ալիևը պատրաստ է հաշտեցման» վերնագրով հրապարակման մեջ. «ադրբեջանական կողմը պատրաստ է վերականգնելու ձեռք բերված պայմանավորվածությունը այն դեպքում, եթե հայկական կողմը ևս հետևի կրակի դադարեցման շուրջ ձեռք բերված պայմանավորվածության պայմաններին»[10]: Այս հրապարակմանը հետևեց պաշտոնական հաղորդում՝ «Պաշտպանության նախարարությունը հայտարարել է հաշտեցման մասին»[11]: Հրադադարի վերաբերյալ պայմանավորվածության ձեռքբերման և դրա զարգացման հետագա ընթացքի մասին ԱՀ ՊՆ-ն չմեկնաբանեց, ավելին արցախյան լրատվադաշտի համար սկզբնաղբյուր սկսեցին ծառայել հայաստանյան մի շարք լրատվամիջոցներ:

Այսպիսով եզրակացնում ենք, որ հանրային կարծիքի ձևավորման գործընթացում Ապրիլյան ռազագործողությունների հրադադարի հաստատման փուլում կիրառվող մանիպուլյացիոն հնարքներից ՀԼՄ-ներում գերիշխել են թյուր տեղեկատվության և կեսճշմարտությունների ներկայացման տեխնիկան և հակադրության սկբունքը, ինչը հակամարտության գործընթացում պատահական կամ անուղղակի որակելու ռիսկերը բացառելի են: Այս կապակցությամբ դիտարկելի է նաև Freedom house-ի պատրաստած «Manipulating Social Media to Undermine Democracy»[12] 2017 թվականի վիճակագրական ինֆոգրաֆիկ զեկույցը:

ՇԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Քալանթարյան է., Մանիպուլյացիոն մեթոդները կառավարման համակարգում, Բանբեր Երևանի համալսարանի. Միջազգային հարաբերություններ, Քաղաքագիտություն, № 2(20), 2016, էջ 69:
2. Նույն տեղում էջ 68:
3. Տես՝ 2016թ. հունվար-մարտ ամիսներին ՊԲ դիրքերի ուղղությամբ ադրբեջանական կողմի կրակոցների քանակը՝ ըստ շաբաթների (https://razm.info/99426):
4. http://nkrmil.am/news/view/191

5. https://haqqin.az/news/67220
6. http://nkrmil.am/news/view/188
7. https://haqqin.az/news/67249
8. https://www.facebook.com/razm.info/posts/876738662436467
9. http://nkrmil.am/news/view/174
10. https://haqqin.az/news/67380
11. https://haqqin.az/news/67383
12. https://freedomhouse.org/report/freedom-net/freedom-net-2017

ԱՄՓՈՓԱԳԻՐ
ԶԼՄ-ներում կիրառվող մանիպուլյացիոն հնարքները հանրային կարծիքի ձևավորման գործընթացում
(Ապրիլյան ռազմագործողությունների հրադադարի հաստատման օրինակով)
Անուշ Դոլուխանյան

Հետազոտության օբյեկտ ընտրելով հայ-ադրբեջանական հակամարտության կողմերի պաշտոնական հրապարակումները առցանց լրատվամիջոցներում (2016 թվականի ապրիլի 2-6-ն ընկած ժամանակահատվածում)՝ Ապրիլյան ռազմագործողությունների հրադադարի հաստատման օրինակով նպատակ ունենք ներկայացնելու ԶԼՄ-ներում կիրառվող մանիպուլյացիոն հնարքները՝ հասարակական կարծիքի ձևավորման գործընթացների համատեքստում:

РЕЗЮМЕ
Приемы манипуляции общественным мнением в СМИ в процессе его формирования
(на примере установления перемирия в ходе апрельских военных действий)
Ануш Долуханян

Ключевые слова: приемы манипуляции, общественное мнение, общественное сознание, СМИ, апрельские военные действия, перемирие.

Избрав предметом исследования официальные заявления сторон армяно-азербайджанского конфликта, представленные в авторитетных онлайн-средствах массовой информации (за период с 2-го по 6-е апреля 2016 года) об установлении перемирия в ходе апрельских военных действий, мы ставим целью показать приемы манипуляции общественным мнением, используемые в СМИ, в контексте процессов его формирования.

SUMMARY
Media Manipulation Techniques in the Process of Public Opinion Formation
(on the Truce Declaration during the April Hostilities)
Anush Dolukhanyan

Keywords: technique of public opinion manipulation, mass consciousness, media, April hostilities, truce.

Having chosen the subject of the study the official publications of the Armenian-Azerbaijani conflict parties, presented in the highly respected online media (from April 2 to April 6, 2016) on the truce declaration during the April military actions, we aim to present the techniques of public opinion manipulation used in the media in the processes of its formation.